

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997թ մայիսի 6-ի ՆՀ- 728 հրամանագրի 1.6-րդ կետի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2011թ. հունիսի 2-ի «Ավագ և հիմնական դպրոցների ցանկը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2010թ. մայիսի 6-ի N 575-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» N 774-Ն որոշման 1-ին և 4.1 կետերը ՀՀ Գեղարքունիքի մարզի Մարտունու Ս. Աբրահամյանի անվան ավագ դպրոցը Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության ենթակայությանը հանձնելու նպատակով

կարգադրում եմ՝

1. Ստեղծել հանձնաժողով հետևյալ կազմով՝
Բիծյան Հ. - մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության բնակարանային և ենթակառուցվածքների գործունեության բաժնի վարիչ /նախագահ/
Սաֆարյան Հ. - մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության կրթության բաժնի վարիչ
Քոլոզյան Ս. - մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության ֆինանսատնտեսագիտական բաժնի վարիչ
Ավետիսյան Վ. - «ՀՀ Գեղարքունիքի մարզի Մարտունու Ս. Աբրահամյանի անվան ավագ դպրոց» ՊՈԱԿ տնօրեն
Բարսեղյան Կ. - «ՀՀ Գեղարքունիքի մարզի Մարտունու Ս. Աբրահամյանի անվան ավագ դպրոց» ՊՈԱԿ հաշվապահ
2. Հանձնաժողովին՝ /նախագահ՝ Հ.Բիծյան/
 - 1) պահանջվող տեղեկատվությունը ներկայացնել Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն.
 - 2) կատարված աշխատանքների մասին ներկայացնել ամփոփ տեղեկատվություն: 3. Սույն կարգադրության կատարման հսկողությունը վերապահել մարզպետարանի աշխատակազմի ղեկավար Ս. Խլղաթյանին:
4. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՄԱՐԶՊԵՏ՝

Ն. ՊՈՂՈՍՅԱՆ